ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 1

ԵՐԵՎԱՆ - ЕРЕВАН - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2021

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**

Խմբագրական խորհուրդ՝

Միքայել Մալխասյան (խմբագիր, պ.գ.թ., դոց.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Արամ Սիմոնյան** (ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Չուգասզյան** (արվ.գ.դ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Արման Եղիազարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.), **Տիգրան Գևորգյան** (պ.գ.թ., ասիստ.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**

Редакционная коллегия:

Микаэл Малхасян (редактор, к.и.н., доц.), **Ашот Мелконян** (академик НАН РА, д.и.н., проф.), **Арам Симонян** (чл.-кор. НАН РА, д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (д. иск. н., проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Арман Егиазарян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсесян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., проф.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.), **Тигран Геворгян** (к.и.н., асист.).

Editor-in-Chief: Doctor of Sciences, Prof. **Edik Minasyan**

Editorial Board:

Mikayel Malkhasyan (Editor, PhD in History, Associate Prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, Prof.), **Aram Simonyan** (Corresp. Member of NAS RA, Doctor of Sciences, Prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, Prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, Prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, Prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, Prof.), **Arman Yeghiazaryan** (Doctor of Sciences, Prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, Prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, Prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, Prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, Prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, Prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, Prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences, Prof.), **Hovik Grigoryan** (PhD in History, Associate Prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD in History, Associate Prof.), **Edgar Hovhannisyan** (PhD in History, Associate Prof.), **Tigran Gevorgyan** (PhD in History, Assistant Prof.).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY

Виген Цатрян, Руслан Кобзарь - К ВОПРОСУ О ЛОКАЛИЗАЦИИ И ЭТИМОЛОГИИ БАСОРОПЕДЫ В СВЕТЕ ЗАВОЕВАНИЙ АРТАШЕСА I У МИДЯН 7

Վիգեն Ծատրյան, Ռուսլան Կոբզար – ԲԱՍՈՐՈՊԵԴԱՅԻ ՏԵՂՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԱՐՏԱՇԵՍ Ա-Ի ՄԵԴԱԿԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ..... 22

Vigen Tsatryan, Ruslan Kobzar – TO THE QUESTION OF THE LOCALIZATION AND ETYMOLOGY OF BASOROPEDA IN THE LIGTH OF THE CONQUESTS OF ARTASHES I FROM THE MEDES..... 22

Արգիշտի Վարդանյան – ՄԱՄԻԿՈՆՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ՏՈՀՄԱՃՅՈՒՂԻ ՄԻ ՃՇԳՐՏՈՒՄ..... 23

Аргишти Варданян – ОДНО УТОЧНЕНИЕ ПРАВЯЩЕЙ ДИНАСТИИ МАМИКОНЯНОВ 29

Argishti Vardanyan – A CORRECTION OF THE GENEALOGY OF THE MAMIKONYANS PRINCELY FAMILY 29

Միքայել Մալխասյան - 16-ՐԴ ԴԱՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ՝ ԱՌԱՆՁԻՆ ՎԱՐՉԱՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ..... 30

Микаэл Малхасян - ОБЩАЯ КАРТИНА РАСПРЕДЕЛЕНИЕ НАСЕЛЕНИЯ В АРМЕНИИ В XVI ВЕКЕ НА ПРИМЕРЕ ОТДЕЛЬНЫХ АДМИНИСТРАТИВНЫХ ЕДИНИЦ..... 38

Mikayel Malkhasyan - GENERAL PICTURE OF POPULATION DISTRIBUTION IN ARMENIA IN THE 16TH CENTURY ON THE EXAMPLE OF SEVERAL ADMINISTRATIVE UNITS.....38

Ֆելիքս Մովսիսյան - «ՄԱՍՅԱՑ ԱՂԱՎՆԻ» ԱՄՍԱԳԻՐԸ ՀՌՈՄԻ ՊԻՈՒՍ IX ՊԱՊԻՆ ԱՇԽԱՐՀԻԿ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՁՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ..... 39

Феликс Мовсисян - ЖУРНАЛ «МАСЬЯЦ АГАВНИ» («МАСИССКИЙ ГОЛУБЬ») О ЛИШЕНИИ СВЕТСКОЙ ВЛАСТИ ПАПЫ РИМСКОГО ПИЯ IX 54

Feliks Movsisyan - THE MAGAZINE "THE MASYATS AGHAVNI'' ON DEPRIVATION OF POPE PIUS IX OF HIS SECULAR POWER..... 55

Հովիկ Գրիգորյան - ՀՅԴ ՑՈՒՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՎԻՏՈՇԻ ԱՂԵՏԻՆ ՀԱՋՈՐԴԱԾ ԱՄԻՍՆԵՐԻՆ (1905 Թ. ՄԱՐՏ - ՀՈՒԼԻՍԻ ԿԵՍԵՐ).....56

Овик Григорян - ДЕЯТЕЛЬНОСТЬ УКАЗЫВАЮЩЕГО ОРГАНА АРФ ДАШНАКЦУТЮН В МЕСЯЦЫ, ПОСЛЕДУЮЩИЕ ЗА ТРАГЕДИЕЙ НА ВИТОШЕ (МАРТ - СЕРЕДИНА ИЮЛЯ 1905 Г.) 72

Hovik Grigoryan - THE ACTIVITIES OF THE INDICATIVE ORGANIZATION OF ARF DASHNAKSUTYUN IN THE MONTHS AFTER THE VITOSH DISASTER (FROM MARCH TO MID-JULY, 1905)..... 73

Գայանե Հովհաննիսյան – ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ 1920-ԱԿԱՆ ԹԹ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ - 1930-ԱԿԱՆ ԹԹ. 74

Гаяне Оганнисян – ДЕМОГРАФИЧЕСКИЕ ПРОЦЕССЫ В НАГОРНО-КАРАБАХСКОЙ АВТОНОМНОЙ ОБЛАСТИ ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ 1920-Х ГГ. – В 1930-Х ГГ..... 82

Gayane Hovhannisyan – DEMOGRAPHIC PROCESSES IN THE NAGORNO-KARABAKH AUTONOMOUS REGION IN THE SECOND HALF OF THE 1920S – IN THE 1930S..... 83

Էդիկ Մինասյան, Արտավազդ Դարբինյան - ԵՐԵՎԱՆԻ ԲՈՒՀԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ (1991-1994 ԹԹ.).....84

Эдик Минасян, Артавазд Дарбинян – ОБ УЧАСТИИ СОТРУДНИКОВ И СТУДЕНТОВ ЕРЕВАНСКИХ ВУЗ-ОВ В ПЕРВОЙ АРЦАХСКОЙ ВОЙНЕ (1991-1994 ГГ.). 89

Edik Minasian, Artavazd Darbinian – THE PARTICIPATION OF YEREVAN UNIVERSITIES IN THE FIRST ARTSAKH WAR (1991-1994) 89

Դավիթ Բարսեղյան - ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՊԱՆՆԵՐԻ ԿՈՐՊՈՒՍԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ 90

Давит Барсегян – ЗНАЧЕНИЕ КОРПУСА СТРАЖЕЙ ИСЛАМСКОЙ РЕВОЛЮЦИИ В ОБЕСПЕЧЕНИИ ВНУТРИПОЛИТИЧЕСКОЙ СТАБИЛЬНОСТИ 95

Davit Barseghyan – THE IMPORTANCE OF THE ISLAMIC REVOLUTIONARY GUARD CORPS IN ENSURING INTERNAL POLITICAL STABILITY 95

Լիլիթ Մակարյան – ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1920 Թ. ԵՎ 2018 Թ. ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ (ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ) 96

Лилит Макарян – ПОЛИТИЧЕСКАЯ СИТУАЦИЯ В АРМЕНИИ В 1920 Г. И В 2018 Г. ПОСЛЕ СМЕНЫ ВЛАСТИ (СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ) 103

Lilit Makaryan – THE POLITICAL SITUATION IN ARMENIA IN 1920 AND IN 2018 AFTER THE POWER SHIFT (COMPARATIVE ANALYSIS) 103

Էդիկ Մինասյան – «ԹՈՒՖԵՆԿՅԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ 20-ՐԴ ԴԱՐԱՎԵՐՋԻՆ ԵՎ 21-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՈՒ ՏԱՍՆԱՄՅԱԿՆԵՐՈՒՄ ... 104

Эдик Минасян – ДЕЯТЕЛЬНОСТЬ ФОНДА "ТУФЕНКЯН" ПО РЕАЛИЗАЦИИ ПРОГРАММ ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ РЕСПУБЛИКИ АРЦАХ В КОНЦЕ XX И В ДВУХ ДЕСЯТИЛЕТИЯХ XXI ВЕКА 113

Edik Minasyan – ACTIVITIES OF "TUFENKIAN" FOUNDATION TO IMPLEMENT THE ECONOMIC DEVELOPMENT PROGRAMS OF THE REPUBLIC OF ARTSAKH AT THE END OF THE 20TH CENTURY AND THE TWO DECADED OF THE 21ST CENTURY 114

Էդգար Չախոյան – ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՎԵՐԱԴԱՍԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ՎՐԱՍՏԱՆ-ԱՄՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (1991-2019 ԹԹ.) 115

Эдгар Чахоян - ВОПРОСЫ ПЕРЕГРУППИРОВКИ ВООРУЖЕННЫХ СИЛ В КОНТЕКСТЕ ОТНОШЕНИЙ ГРУЗИИ И США НА ЮЖНОМ КАВКАЗЕ (1991-2019 ГГ.) 134

Edgar Chakhoyan - ARMED FORCES REDEPLOYMENT ISSUES IN THE CONTEXT OF GEORGIA-US RELATIONS IN THE SOUTH CAUCASUS (FROM 1991 TO 2019) 135

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Ռաֆիկ Նահապետյան – ԱՂԶՆԻՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ (XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ – XX ԴԱՐԻ ՍԿԻԶԲ) 136

Рафик Наапетян – ОБ ИЗУЧЕНИИ ЖИЛЫХ КОМПЛЕКСОВ АГДЗНИКА (ВТОРАЯ ПОЛОВИНА XIX В. И НАЧАЛО XX В.) 146

Rafik Nahapetyan – ON STUDYING OF RESIDENTIAL COMPLEXES OF AGHDZNIK (SECOND HALF OF THE 19TH CENTURY AND THE BEGINNING OF THE 20TH CENTURY) 147

Արտակ Խաչատրյան – ԱԴՐԲԵՋԱՆՑԻՆԵՐԻ ԷԹՆՈԳԵՆԵԶԻՍԻ ՓՆՏՐՈՒՔՆԵՐԸ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԼՂԻՄ-ՈՒՄ 148

Артак Хачатрян – ПОИСКИ ЭТНОГЕНЕЗИСА АЗЕРБАЙДЖАНЦЕВ И КУЛЬТУРНАЯ ПОЛИТИКА В НКАО. 155

Artak Khachatryan – THE SEARCH FOR THE ETHNOGENESIS OF AZERBAIJANIS AND CULTURAL POLICY IN THE NKAO 155

ԱՐՎԵՍՏ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ / ИСКУССТВО И КУЛЬТУРА / ART AND CULTURE

Աննա Դավթյան – 13-ՐԴ ԴԱՐԻ ԽԱՉՔԱՐԵՐԻ ԶԱՐԴԱՁԵՎԵՐԸ 156

Анна Давтян - ОРНАМЕНТЫ ХАЧКАРОВ XIII ВЕКА 164

Anna Davtyan - THE ORNAMENTS OF THE 13TH CENTURY KHACHKARS (CROSS-STONES) 164

Ռուզաննա Միքայելյան – ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ «ՀՈԿՏԵՄԲԵՐ» ԿԻՆՈԹԱՏՐՈՆԻ ԻՆՏԵՐԻԵՐ ԴԻԶԱՅՆԸ 172

Рузанна Микаелян – ДИЗАЙН ИНТЕРЬЕРА КИНОТЕАТРА «ОКТЯБРЬ» В ГОРОДЕ ГЮМРИ 175

Ruzanna Mikayelyan – THE INTERIOR DESIGN OF CINEMA "HOKTEMBER" IN GYUMRI 176

Զահրա Մալեքի – ՀԱՖԵԶԻ ԳԱԶԵԼՆԵՐԸ ՖԱՐԱՀ ՕՍՈՒԼԻԻ ԱՉՔԵՐՈՎ 177

Захра Малеки – ГАЗЕЛИ ХАФИЗА ГЛАЗАМИ ФАРАХ ОССУЛИ 187

Zahra Maleqi – HAFEZ'S GAZELLES AS SEEN BY FARAH OSSULI 187

Մարինե Գևորգյան, Գայանե Թովմասյան – ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ ԵՎ ՄԱՐԶՈՒՄ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ 188

Марине Геворкян, Гаяне Товмасян – ВОВЛЕЧЕНИЕ ИСТОРИКО-КУЛЬТУРНЫХ ПАМЯТНИКОВ АРАГАЦОТНСКОЙ ОБЛАСТИ РА В СФЕРУ ТУРИЗМА И АНАЛИЗ ВОЗМОЖНОСТЕЙ РАЗВИТИЯ ТУРИЗМА В РЕГИОНЕ 198

Marine Gevorgyan, Gayane Tovmasyan – INVOLVEMENT OF HISTORICAL AND CULTURAL MONUMENTS OF ARAGATSOTN REGION OF THE RA INTO TOURISM SPHERE AND THE ANALYSIS OF TOURISM DEVELOPMENT OPPORTUNITIES IN THE REGION 198

ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ИСТОЧНИКОВЕДЕНИЕ / SOURCE STUDIES

Լիլիթ Հակոբյան – ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿՈՒՄ 199

Лилит Акобян - СОГЛАСОВАНИЕ ЧЛЕНОВ ПРЕДЛОЖЕНИЯ И ЕГО ВЫРАЖЕНИЕ В ПРОИЗВЕДЕНИИ "ИСТОРИЯ АРМЕНИИ" КИРАКОСА ГАНДЗАКЕЦИ 204

Lilit Hakobyan – PECULIARITIES OF THE AGREEMENT BETWEEN THE SENTENCE PARTS AND ITS EXPRESSION IN KIRAKOS GANDZAKETSI'S "HISTORY OF THE ARMENIANS" 205

Վահագն Հակոբյան – ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ 206

Ваагн Акобян – ИЗ ПЕРЕПИСКИ ДАВИТА АНАНУНА 218

Vahagn Hakobyan – FROM DAVID ANANUN'S LETTERS 218

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ / УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL

Լիլիթ Մինասյան - ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԻՆ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ (ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ) 219

Лилит Минасян - ИСПОЛЬЗОВАНИЕ ИСТОЧНИКОВ НА УРОКАХ ИСТОРИИ ДЛЯ РАЗВИТИЯ ИСТОРИЧЕСКОГО И КРИТИЧЕСКОГО МЫШЛЕНИЯ УЧАЩИХСЯ (ИССЛЕДОВАНИЕ ДЕЙСТВИЙ) 229

Lilit Minasyan - USING SOURCES IN THE HISTORY CLASSROOM FOR DEVELOPING STUDENTS' HISTORICAL AND CRITICAL THINKING (ACTION RESEARCH) 229

Մերի Հովհաննիսյան - «ԴԵԲԱՏ» ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 230

Мери Оганнисян - ОСОБЕННОСТИ ИСПОЛЬЗОВАНИЯ МЕТОДА ДЕБАТОВ 236

Meri Hovhannisyan - FEATURES OF USING THE DEBATE METHOD 236

Արմեն Խաչիկյան – ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՉԱՓՄԱՆ ՌԱԶՄԱՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎՈՒՄ. ՍՈՑԻՈՄԵՏՐԻԿԱԿԱՆ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ 237

Армен Хачикян – ВОЕННО-СОЦИОЛОГИЧЕСКАЯ МЕТОДОЛОГИЯ ИЗМЕРЕНИЯ ЛИДЕРСТВА В ВОИНСКИЙ КОЛЛЕКТИВАХ. ПРИМЕНЕНИЕ СОЦИОМЕТРИЧЕСКОГО МЕТОДА В ВООРУЖЕННЫХ СИЛАХ РА 246

Armen Khachikyan – MILITARY SOCIOLOGICAL METHODOLOGY OF MEASURING LEADERSHIP IN MILITARY TEAM. APPLICATION OF SOCIOMETRIC METHOD IN THE RA ARMED FORCES 246

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ / РЕЦЕНЗИИ / REVIEWS

ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ, ՄԻՔԱՅԵԼ ՄԱԼԽԱՍՅԱՆ, ԼԻԱՆՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆՆ ԸՍՏ ԱՆՏԻԿ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԱՐԴԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՔՐԵՍՏՈՄԱՏԻԱ), ԵՐԵՎԱՆ, ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2020, 388 ԷՋ: 247

ՀՈՎՆԱՆ ՁԱՆՅԱՆ (ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՂԱՋԱՆՅԱՆ), ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ, ԵՐ., ԷԴԻՏ ՊՐԻՆՏ, 2020, 448 ԷՋ: 247

ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՆԸՆԴՄԵՋ ՇՂԹԱՆ ԴԱՐԵՐԻ ԽՈՐՔԻՑ ՄԻՆՉԵՎ XXI ԴԱՐԻ ՍԿԻԶԲ (ՊԱՏՄԱԲԱՆ-ՄԻՋԱԶԳԱՅՆԱԳԵՏԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ), ԵՐԵՎԱՆ, ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏ., 2020, 428 ԷՋ: 250

ՆՈՐ ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻՆ ԵՎ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՀԵՐՈՍ ՀԱՅՈՒՀԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ (Э. Г. МИНАСЯН, АРМЯНКИ В ГОДЫ ВТОРОЙ МИРОВОЙ И ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ (1939-1945), МОНОГРАФИЯ, РОСТОВ-НА-ДОНУ–ТАГАНРОГ, ИЗ.-ВО ЮЖНОГО ФЕДЕРАЛЬНОГО УНИВЕРСИТЕТА, 2021, 284С.) .. 252

ՄԵՐ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ 255

ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ 258

ՀԱՎԵՐԺԻ ՃԱՄՓՈՐԴ

ՀԱՅՐԱՊԵՏ ՄԱՐԳԱՐՅԱՆ (1950-2021) 263

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 266

INFORMATION ABOUT THE AUTHORS 267

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ 268

NOTICE FOR THE AUTHORS 268

«ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ» ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՈՒՄ ԳՐԱՆՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ 269

Միքայել Մալխասյան

16-ՐԴ ԴԱՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ՝ ԱՌԱՆՁԻՆ ՎԱՐՉԱՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ

Հիմնաբառեր. Օսմանյան կայսրություն, Սեֆյան Իրան, Հայաստան, բնակչության տեղաբաշխում, 16-րդ դար, հայեր, առանձին վարչամիավորներ:

16-րդ դարում Հայաստանը վերածվել էր Օսմանյան կայսրության և Սեֆյան Իրանի միջև ռազմական գործողությունների թատերաբեմի: Տասնամյակներ շարունակվող հակամարտությունը խիստ բացասաբար էր ազդում Հայաստանի բնականոն զարգացման վրա՝ անդրադառնալով սոցիալ-տնտեսական և հոգևոր-մշակութային զարգացման տարբեր ուղղությունների վրա: Այդ բացասական անդրադարձներից առանձնապես աչքի էին ընկնում ժողովրդագրական հետևանքները, քանի որ հայ բնակչությունը՝ որպես ժողովրդագրական մեկ ամբողջական համակարգ, սկսեց ենթարկվել այնպիսի արտաքին ազդեցությունների, որոնք խաթարում էին նրա բնականոն կենսագործունեությունը: Այդպիսի ազդեցությունների թվում էին բնակչության բռնի տեղահանումները, մանկահավաքչությունը, կրոնադավանական տարբերակմամբ հարկահավաքության համակարգը, կրոնափոխության խրախուսումը և այլն: Նման հանգամանքներում մեր ուսումնասիրության նպատակն է հասկանալ, թե այդ բացասական ներգործությունների հետևանքով տեղի ունեցած գործընթացների արդյունքում ինչպիսին է եղել Հայաստանի տարածքում երկու օտար տերությունների ստեղծած վարչամիավորներում հայ բնակչության տեղաբաշխման պատկերը: Այս նպատակին հասնելու համար խնդիր ենք դրել հնարավորինս դուրս բերել աղբյուրագիտական բաման, որը բավականին սուղ է նշված ժամանակաշրջանի համար և ունի նաև մեթոդաբանական առանձնահատկություններ, ինչպիսին է օրինակ՝ օսմանյան աշխարհագիր մատյաններում բնակչության՝ ոչ թե էթնիկ, այլ կրոնական պատկանելությամբ դասակարգումը:

Մուտք

16-րդ դարի սկզբին Օսմանյան կայսրությունը և Սեֆյան Իրանը պայքար սկսեցին՝ Մերձավոր Արևելքում գերիշխանություն հաստատելու համար: Այդ պայքարի հիմնական թատերաբեմը Հայաստանը և Միջագետքն էին: Պատերազմները շարունակվեցին դարի գրեթե ողջ ընթացքում և հաջորդ դարի առաջին չորս տասնամյակներին՝ հսկայական արհավիրքներ բերելով Հայաստանի համար:

Տասնամյակներ շարունակվող հակամարտությունը խիստ բացասաբար էր ազդում Հայաստանի բնականոն զարգացման վրա՝ անդրադառնալով սոցիալ-տնտեսական և հոգևոր-մշակութային զարգացման տարբեր ուղղությունների վրա: Այդ բացասական անդրադարձներից առանձնապես աչքի էին ընկնում ժողովրդագրական հետևանքները, քանի որ հայ բնակչությունը՝ որպես ժողովրդագրական մեկ ամբողջական համակարգ, սկսեց ենթարկվել այնպիսի արտաքին ազդեցությունների, որոնք խաթարում էին նրա բնականոն կենսագործունեությունը: Այդպիսի ազդեցությունների թվում էին բնակչության բռնի տեղահանումները, մանկահավաքչությունը, կրոնադավանական տարբերակմամբ հարկահավաքության համակարգը, կրոնափոխության խրախուսումը և այլն[1]: Նման հանգամանքնե-

* Հոդվածը ներկայացվել է 07.03.2021 թ., գրախոսվել՝ 19.03.2021 թ., ընդունվել տպագրության՝ 30.07.2021 թ.:

[1] *Թուրք-պարսկական պատերազմների ժամանակաշրջանում Հայաստանում տեղի ունեցած ժողովրդագրական գործընթացների մասին առավել մանրամասն տե՛ս Մալխասյան Մ., Ժողովրդագրական գործընթացները Հայաստանում 16-րդ դարում – 17-րդ դարի առաջին կեսին, Երևան, 2020:*

ռում մեր ուսումնասիրության նպատակն է հասկանալ, թե այդ բացասական ներգործությունների հետևանքով տեղի ունեցած գործընթացների արդյունքում ինչպիսին է եղել Հայաստանի տարածքում երկու օտար տերությունների ստեղծած վարչամիավորներում հայ բնակչության տեղաբաշխման պատկերը: Այս նպատակին հասնելու համար խնդիր ենք դրել հնարավորինս դուրս բերել աղբյուրագիտական բազան, որը բավականին սուղ է նշված ժամանակաշրջանի համար և ունի նաև մեթոդաբանական առանձնահատկություններ, ինչպիսին է օրինակ՝ օսմանյան աշխարհագիր մատյաններում բնակչության՝ ոչ թե էթնիկ, այլ կրոնական պատկանելությամբ դասակարգումը: Նման խնդիր կա նաև հայ հեղինակների մոտ, երբ հայ բնակչությանը տրվում է ընդհանրական «քրիստոնեայք» անվանումը:

16-րդ դարում, չնայած հաճախակի տեղի ունեցող պատերազմական գործողություններին, զանգվածային բռնագաղթերին, սովին և ժանտախտին, սննդի ստացման համար հարմար բնակլիմայական պայմանների և համապատասխան հողերի առատության շնորհիվ Հայաստանի զգալի մասը շարունակում էր խիտ բնակեցված լինել:

Քննարկում և արդյունքներ

Բնակչության տեղաբաշխման ընդհանուր պատկերը տեսնելու համար դիմենք Օսմանյան կայսրության և Սեֆյան Իրանի կազմում Հայաստանում ստեղծված տարբեր վարչամիավորներում բնակչության տեղաբաշխման ներկայացմանը:

16-րդ դարում Արևմտյան Հայաստանի ամենամարդաշատ վարչամիավորներից էր Էրզրումի նահանգը: 1474 թ. իտալացի ճանապարհորդ Հ. Բարբարոյի վկայությամբ՝ Էրզրումի ամենամարդաշատ կենտրոններից Բաբերդն ունեցել է 1500 ընտանիք հայ բնակչություն[1]: Ըստ 17-րդ դարի օսմանյան հեղինակ Էվլիյա Չելեբիի՝ Մեհմեդ II Ֆաթիհը (Նվաճողը, 1444-1446, 1451-1481) Իզմիրին մերձակա Թիրե քաղաքը գրավելուց հետո այնտեղից մոտ 3 հազար մարդ բերել է Բաբերդի սանջակ (գավառ)[2]: Քանի որ Թիրեի բնակչությունը նշյալ ժամանակաշրջանում հիմնականում հունալեզու և ուղղափառ է եղել, կարելի է եզրակացնել, որ այնտեղից տեղափոխված բնակչությունը գերազանցապես հունալեզու և ուղղափառ պետք է լիներ: Սակայն նման բռնագաղթի մասին տեղեկությունը չի հաստատվում այլ սկզբնաղբյուրներով, ավելին՝ հնարավոր չէ հասկանալ դրա շարժառիթը, քանի որ օսմանյան սյուրգյունային, այսինքն՝ բռնագաղթերի քաղաքականության մեջ կարևոր էր նստակյաց բնակչությանը սակավամարդ կամ տնտեսական զարգացման անընդհատ պահանջմունք ունեցող տարածքներ տեղափոխելը, մինչդեռ Բաբերդում նստակյաց՝ երկրագործ, արհեստագործ հայ բնակչության առկայությունը նման պահանջմունք չէր ստեղծում:

Թուրք հետազոտող Ի. Միրողլուի հրատարակած օսմանյան աշխարհագիր մատյանների հիման վրա Լ. Սահակյանը վերհանել է 16-րդ դարում Էրզրումի նահանգի մի քանի գավառների բնակավայրերի քանակը, բնակչության մոտավոր թիվը և էթնոկրոնական կազմը: Այսպես՝ Բաբերդի կազայում (գավառակում) 1516-1518 թթ. հաշվառված է 211 (մոտ 15 հազար մարդ), 1520 թ.՝ 203, 1530 թ.՝ 207 (16,7 հազար մարդ) գյուղ, ընդ որում՝ քրիստոնյաները (հայերը) և մուսուլմանները 1516 թ. կազմում էին բնակչության համապատասխանաբար 78 (89) և 11 %-ը, 1530 թ.՝ 71 (87) և 13 %-ը[3]: Հետաքրքիր է, որ Բաբերդ քաղաքի բնակչության թիվը, չնայած ոչ նպաստավոր ռազմաքաղաքական պայմաններին, 16-րդ դարում շարունակաբար աճել է՝ 1520 թ. 3341-ից 1591 թ. հասնելով 5630-ի, ընդ որում՝ քրիստոնյաների տեսակարար կշիռը 68,7 %-ից նվազել է 65,2 %-ի[4]: Ակնհայտ է, որ

---

[1] *Տե՛ս «Ուղեգրություններ», հ. Ա, կազմեց՝ Հ. Հակոբյան, Երևան, 1932, էջ 195:*

[2] *Տե՛ս Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին» (այսուհետ՝ «Թուրքական աղբյուրներ»), կազմեց՝ Ա. Սաֆրաստյանը, հ. Գ, Երևան, 1967, էջ 126:*

[3] *Տե՛ս Սահակյան Լ., Բարձր Հայքի Բաբերդ, Սպեր, Դերջան գավառների տեղանուններն ու ժողովրդագրությունը XVI դարի օսմանյան աշխարհագիր մատյաններում, Երևան, 2007, էջ 58, 212, VI: Փակագծերում ավելացված են «անհայտ» կրոնական պատկանելություն ունեցողները՝ որպես հավանական քրիստոնյաներ:*

[4] *Տե՛ս նույն տեղում, էջ 125-128; Melkonyan A., The demography of the Province of Erzerum: Sixteenth-Twentieth Centuries, in "Armenian Karin/Erzerum", Edited by R. Hovannisian, Costa Mesa, 2003, էջ 134-145:*

քաղաքում մուսուլմանների տեսակարար կշռի՝ գյուղական բնակչության համապատասխան ցուցանիշը գերազանցելու գլխավոր պատճառը բերդում տեղակայված օսմանյան կայազորն էր, իսկ մուսուլման քաղաքացիական բնակչությունն իրականում չէր աճել:

Վերը նշված օսմանյան հարկացուցակների հիման վրա Լ. Սահակյանը հաշվարկել է, որ Էրզրումի նահանգի մեկ այլ վարչամիավորում՝ Սպերի գավառակում, 1520 թ. կար 139 գյուղ, իսկ հրապարակված 41 գյուղերում 6,3 հազար բնակչության միայն 0,2 %-ն էր մուսուլման՝ 1530 թ. հասնելով միայն 1,6 %-ի[1]: Թ. Հակոբյանը, հենվելով եվրոպացի ուղեգիրների տեղեկությունների վրա, կարծում է, որ, չնայած 1548 թ. Սեֆյանների կողմից ավերմանը, 16-րդ դարի երկրորդ կեսին Սպերի բնակչության թիվը 4-5 հազար ընտանիք էր[2]:

Զգալի թվով բնակավայրեր են գրանցվել նաև Դերջանում՝ 1516 թ.՝ 173 (Ներքին Դերջանի 66 գյուղից 34-ը ավերված էին), 1530 թ.՝ 170, ընդ որում՝ 1516 թ. 4,7 հազար բնակիչներից միայն 9,8 %-ն էր մուսուլման, իսկ 1530 թ.՝ մոտ 10,8 հազարից 7,6 %-ը[3]: Այսպիսով՝ Էրզրումի նահանգի երեք գավառակների օրինակով երևում է, որ 16-րդ դարի առաջին կեսին հայ բնակչությունը շարունակում էր գերակշռող մեծամասնություն կազմել իր հայրենի հողում (երեք գավառակներում՝ միջինը 93 %): Նշված գավառակներում 1516-1530 թթ. 520-ից ավելի գյուղերի հիշատակումն իր հերթին խոսում է բնակչության մեծ խտության մասին: Դարավերջին էլ (1591 թ.) Բաբերդի գավառակի գյուղերում հաշվառվել են 4534 (5087) քրիստոնյաներ և 1800 մուսուլմաններ[4]: Անշուշտ, այս թվերը նախորդների հետ անհամատեղելի են թվում, սակայն, ուսումնասիրելով օսմանյան հարկացուցակների՝ ըստ շնչերի կազմելու սկզբունքները, հանգել ենք այն եզրակացության, որ այստեղ խոսքը միայն գլխահարկ վճարող քրիստոնյաների մասին է, այսինքն՝ չափահաս տղամարդ բնակիչները՝ առանց ծերունիների: Ըստ պատմական ժողովրդագրության գլխավոր տեսաբաններից մեկի՝ Թ. Հոլլինգսուորթի՝ երեխաները ուշմիջնադարյան Եվրոպայում կազմում էին բնակչության 40 %-ը[5], ուստիև սրա հետ միասին հաշվի առնելով նաև զառամյալներին (պայմանականորեն՝ շուրջ 5%), ստանում ենք, որ գավառակում ապրում էր 18,5 հազար քրիստոնյա, ինչը համադրելի է դարի առաջին կեսի վիճակագրական ցուցանիշների հետ:

Էրզրումի հարևան՝ Կարսի նահանգում բնակչության տեղաբաշխման ավանդական պատկերի վրա խիստ բացասական ազդեցություն ունեցավ 1555 թ. մայիսի 29-ին կնքված Ամասիայի հաշտության պայմանագիրը, որով Հայաստանը բաժանվեց Օսմանյան կայսրության և Սեֆյան Պարսկաստանի միջև[6]: Պայմանագրով Կարսի շրջանը չեզոք գոտի էր դառնում երկու տերությունների միջև: Այդ գոտու սահմաններն արևելքում հասնում էին մինչև Ախուրյան գետ, հարավում՝ Հայկական պար լեռնաշղթա (Կաղզվանի շրջանում), հյուսիսում՝ Կարսի սարահարթի հյուսիսային եզրամաս (Չըլդըր լճից հարավ՝ Զարիշատի շրջանում), արևմուտքում՝ Կարմիր Փորակի լեռներ[7]: Չեզոք գոտու ստեղծումը կատարյալ արհավիրք էր Կարսի շրջանի տեղաբնիկ հայ բնակչության համար, քանի որ տարածքը պետք է ամայացվեր ու անմարդաբնակ դարձվեր[8]: Վրացական սկզբնաղբյուրներում ներկայացված է Կարսի ավերումը, բնակչության մի մասի կոտորածն ու մյուս մասի վերաբնակեցումը

---

[1] *Տե՛ս Սահակյան Լ., Բարձր Հայքի..., էջ 58, 245:*

[2] *Տե՛ս Հակոբյան Թ., Պատմական Հայաստանի քաղաքները, Երևան, 1987, էջ 225-226:*

[3] *Տե՛ս Սահակյան Լ., Բարձր Հայքի..., էջ 272-273, XII:*

[4] *Տե՛ս նույն տեղում, VI:*

[5] *Տե՛ս Hollingsworth T., Historical Demography, London: Cambridge University Press, 1976, էջ 49:*

[6] *Տե՛ս Vercellin G., Solimano il Magnifico, Firenzi: Giunti Dossier, 1997, էջ 14:*

[7] *Տե՛ս Բաղայան Գ., Հայաստանը 16-րդ դ.: Պարսկա-օսմանյան պատերազմները (քարտեզ), մասշտաբ՝ 1:3 600 000, «Հայաստանի ազգային ատլաս», հ. Բ, էջ 49:*

[8] *Տե՛ս Բայբուրդյան Վ., Օսմանյան կայսրության պատմություն, Երևան, 2011, էջ 228; Նաջարյան Հ., Թուրքիրանական հարաբերությունները XVI դ. ու XVII դ. առաջին կեսին և Հայաստանը, Երևան, 1961, էջ 111; Զուլալյան Մ., Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դդ., Երևան, 1980, էջ 45; Նույնի՝ Հայ ժողովրդի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, գիրք Ա, Երևան, 1990, էջ 120-121:*

Կարսից Թահմասպ I-ի որդի Միրզա-Իսմայիլի կողմից[1]: Անգամ 1555 թ. հաշտությունից և պարսից շահ Աբաս I-ի (1587-1629 թթ.) կազմակերպած բռնագաղթից անմիջապես հետո՝ 1608-1610 թթ., Կարսում հայ բնակչություն է հիշատակվում՝ «բնակիչք Ղարսայ հայք»[2]:

Օսմանյան կայսրության՝ արևմտահայկական ամենահայահոծ վարչամիավորներից մեկն էր Վանի նահանգը: Այստեղ դեռ 1510-ական թթ. վենետիկցի մի վաճառական Վանը հիշատակում է որպես հիմնականում հայերով բնակեցված մեծ քաղաք, իսկ Աղթամար կղզում՝ «Արմենիկ» անունով բազմամարդ քաղաք, այսինքն՝ հայկական աղբյուրներում հիշատակվող Աղթամար ավանը, որտեղ միայն հայ քրիստոնյաներ, այսինքն՝ հայեր էին բնակվում[3]: Վանի նահանգի վերաբերյալ պաշտոնական վիճակագրություն, ցավոք, չի հրատարակվել: Սուլեյման I Կանունիի (1520-1566 թթ.) կողմից անցկացված մարդահամարի մասին քանիցս հիշատակում է թուրք ուղեգիր Էվլիյա Չելեբին: Այդուհանդերձ, «Գյուրջիստանի վիլայեթի մեծ դավթար»-ի օրինակը ցույց է տալիս, որ հարկացուցակներում հնարավոր չէ տեղեկություններ գտնել օջաքլըք կամ հյուբյումեթ[4] հանդիսացող վարչամիավորներում, որոնք առկա էին նախևառաջ հենց Վանի և Դիարբեքիրի նահանգներում: Այդ իսկ ոչ միասնական սկզբունքների պարագայում 1577 թ. օսմանյան թիմարների[5] մի դավթարում Վանի նահանգի Վանի, Արճեշի, Արծկեի (թուրք.՝ Ադիլջևազ), Բիթլիսի, Բերկրիի և Կեցանի (թուրք.՝ Քեսան) գավառների Գավաշի, Արճեշի, Տատիկի, Օխկանի, Չուխուրի, Ամյուկի, Մուշի, Ադիլջևազի, Բերկրիի և այլ նահիեներում (գյուղախմբերում) նշվում է 104 գյուղ[6]: Նույնպիսի մի դավթար էլ 1603 թ. հիմնականում համապատասխանում է նախորդին[7]: Հետաքրքրական է, որ, երբ 1561 թ. «Շամիրամայ ջուրն բերին Վանայ այգիքն», Վան քաղաքից աշխատանքներին մասնակցել է 8 հազար մշակ[8], որոնք արական սեռի ներկայացուցիչներ պիտի լինեին: Սա խոսում է այն մասին, որ քաղաքը բնակչության մեծ թիվ ուներ:

Հետաքրքիր իրավիճակ էր թուրք-վրացական հարաբերություններում կռվախնձոր հանդիսացող Սամցխեի աթաբեկությունում (վրաց.՝ Սաաթաբագո): Նրան վերաբերող 1520-ական թթ. կազմված օսմանյան մի զեկուցագրում նշվում է, որ Տայք (վրաց.՝ Թավելի) գավառը գտնվում էր Վրաստանի կազմում, բազմամարդ և ընդարձակ էր, խիտ բնակեցված ու բարգավաճ էր, ուներ շուրջ 200 բարեկարգ գյուղեր[9]: Մամրվանի (թուրք.՝ Նարիման) գավառն ուներ 40-50 գյուղեր, ջրառատ էր և ցանքատարածություններով ու արոտավայրերով հարուստ[10]: Թորթումի Խախոյի (Իշխանաձորի) շրջանում շուրջ 100 գյուղեր կային, այդ թվում՝ 20-30-ում կառավարում էին անկախ «անհավատ ազնավուրներ»[11], այսինքն՝ քրիստոնյա ազնվականներ: Արդահանի գավառում՝ մինչև Թմուկ բերդ, 300 գյուղեր կային՝ ջրառատ և ցանքատարածություններով ու արոտավայրերով հարուստ[12]: Ջավախքում՝ մինչև

---

[1] Տե՛ս «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», կազմեց՝ Լ. Մելիքսեթ-Բեկ, հ. Բ (ԺԳ-ԺԸ դդ.), Երևան, 1936, էջ 136: 13-րդ դարում Կարսն ուներ 50 հազար բնակիչ (տե՛ս Հակոբյան Թ., նշվ. աշխ., էջ 167):

[2] «Դիւան Հայոց Պատմութեան», կազմեց՝ Գ. Աղանեանց, գիրք Ժ, Թիֆլիս, 1912, էջ 59:

[3] Տե՛ս «Ուղեգրություններ», հ. Ա, էջ 300-301:

[4] Յորթլուքը, օջաքլըքը և հյուբյումեթը Օսմանյան կայսրությունում ժառանգական հողատիրության ձևեր էին: Հյուբյումեթի տներն ու բերքերը իշխողներին էր պատկանում, իսկ օջաքլըքում՝ պետությանը (տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Գ, էջ 318-320, ծան. 77):

[5] Տարեկան 20 հազար ակչեից պակաս հարկ վճարելու պարտավորությամբ պարզևական հողերը Օսմանյան կայսրությունում 14-16-րդ դարերում կոչվում էին թիմար (տե՛ս Hütteroth W.-D., Abdulfattah K., Historical Geography of Palestine, Transjordan and Southern Syria in the Late 16th Century. Issue 5 of Erlanger Geographische Arbeiten: Sonderband. Erlangen: Fränkischen Geographischen Gesellschaft, 1977, էջ 99):

[6] Տե՛ս Փափազյան Հ., Սոֆիայի Կիրիլ և Մեթոդի ժողովրդական գրադարանի Վանի էյալեթին վերաբերող օսմանյան դիվանական վավերագրերը, «Բանբեր Մատենադարանի», թիվ 15, Երևան, 1986, էջ 275:

[7] Տե՛ս նույն տեղում:

[8] Տե՛ս «Մանր ժամանակագրություններ (XIII-XVIII դդ.)», հ. 2, կազմեց՝ Վ. Հակոբյան, Երևան, 1956, էջ 482:

[9] Տե՛ս Մուրադյան Ս., XVI դ. օսմաներեն մի վավերագիր, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. 22, Երևան, 2003, էջ 244:

[10] Տե՛ս նույն տեղում:

[11] Տե՛ս նույն տեղում:

[12] Տե՛ս նույն տեղում, էջ 245:

Ածղուր (Ասկուրեթ), հարթավայրոտ և խիտ բնակեցված մոտ 200 գյուղեր կային, իսկ փաշայանիստ Ախալցխայի շրջակայքում՝ ևս 200 գյուղեր[1]: Ձեկուցագրի տվյալների համադրմամբ ստացվում է, որ 1520-ական թթ. աթաբեկությունում շուրջ 1050 գյուղեր կային:

Համանման թվեր են ներկայացված դարավերջի օսմանյան հարկացուցակում: Չըլդըրի (Ախալցխայի) նահանգի 1250 բնակավայրերի բնակչության գերակշիռ մասը, ըստ 16-րդ դարի վերջի օսմանյան հարկացուցակի՝ «Գյուրջիստանի վիլայեթի մեծ դավթար»-ի, կրում էր հայերի ու վրացիների շրջանում մեծ տարածում ունեցող անուններ, այսինքն՝ երկրամասը գերազանցապես քրիստոնեաբնակ էր[2]: Ա. Մելքոնյանը համեմատել է օսմանյան երկու հարկացուցակների տվյալները՝ եզրակացնելով, որ միայն Վերին Ջավախքի 3 գավառներում 1595 թ. եղել են 358 գյուղեր, իսկ 1694-1732 թթ.՝ 142, այսինքն՝ 2,5 անգամ ավելի քիչ: 1595 թ. Ախալքալաքի գավառում եղել են 139 գյուղեր (Ակշեհիրի նահիե՝ 84, Թմուկ՝ 22, Նիալիսղուրի՝ 33), Խերթվիսի գավառում՝ 119 (Անտառային Ջավախք՝ 69, Խերթվիս՝ 38, Բուզմարեթ՝ 12), Չըլդըրի գավառում՝ 100 (Ջանբազ՝ 51, Գայլաբերդ՝ 16, Քանարբել՝ 33), ընդ որում՝ բնակավայրերի թիվը նվազել է բոլոր նահիեներում, հատկապես՝ Բուզմարեթի նահիեում ընդամենը մեկ բնակավայր էր մնացել[3]: Մեր կարծիքով՝ այս կտրուկ նվազման ժամանակահատվածը 17-րդ դարի երկրորդ կեսն է, քանի որ Չըլդըրի էյալեթի 13 սանջակներում Էվլիյա Չելեբին 17-րդ դարի կեսին հիշատակում է 1060 գյուղեր[4]: Հետագայում բռնի իսլամացման քաղաքականությունից տուժել է Օլթիի լիվան, որի բնակավայրերի թիվը 18-րդ դարի առաջին քառորդին 16-րդ դարի վերջի համեմատ կրկնակի նվազել է[5]:

Օսմանյան կայսրության կազմում զգալի վերափոխումներ է կրել Համշենը: Թուրք պատմաբան Մ. Գյոքբիլգինի հրապարակած Տրապիզոնի գավառին պատկանող օսմանյան աշխարհագիր մատյաններից տեղեկանում ենք, որ 16-րդ դարում Համշենը Տրապիզոնի գավառի մի գավառակ էր՝ 3 նահիեներով (գյուղախմբերով)՝ Հեմշին, Քարահեմշին, Էքսանոց[6]: Համաձայն այդ հրապարակման՝ 1532 թ. Տրապիզոնի գավառի նույնանուն գավառակում կային 199 գյուղեր (բնակչությունը՝ 12639 տուն քրիստոնյաներ և 1094 տուն մուսուլմաններ), իսկ Համշենի գավառակում՝ 34 գյուղեր (457 տուն քրիստոնյաներ և 214 տուն մուսուլմաններ)՝ 682 շունչ բնակչությամբ[7]: Լ. Սահակյանն ընտանիքի անդամների թվի՝ 8-10 միջին գործակցով հաշվարկել է Համշենի բնակչության թիվը՝ անընդունելի համարելով 682 շունչ բնակչության մատնանշումը Մ. Գյոքբիլգինի մոտ: Նա ստացել է հետևյալ թվերը՝ 3656-4570 քրիստոնյաներ և 1712-2140 մուսուլմաններ[8]: Միանգամայն ընդունելի համարելով Լ. Սահակյանի հաշվարկը՝ պետք է միաժամանակ նկատենք, որ 682 շունչը գլխահարկ վճարող տղամարդկանց թիվն է միայն: Ըստ Լ. Սահակյանի՝ Համշենում բռնի իսլամացման առաջին փորձերը պետք է դիտարկել 16-րդ դարի վերջից և 17-րդ դարից, ինչն

---

[1] *Տե՛ս նույն տեղում, էջ 246:*

[2] *Տե՛ս Մելքոնյան Ա., Օսմանյան կայսրության ժողովրդագրական քաղաքականությունը որպես ցեղասպանության դրսևորում ըստ Էրզրումի և Ախալցխայի նահանգների օրինակների, «Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», հ. I, Երևան, 2002, էջ 40; Նույնի՝ Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Երևան, 2003, էջ 76-82: 16-րդ դարի վերջին Տայքի բնակչության էթնիկ կազմի մասին մանրամասն տե՛ս Բաղայան Գ., Տայքի կենտրոնական և արևելյան գավառների ազգային նկարագիրը 16-րդ դարի վերջին (ըստ «Գյուրջիստանի վիլայեթի ընդարձակ հարկացուցակի»), «Պատմական Տայք. պատմություն, մշակույթ, դավանանք» հոդվածների ժողովածու, Ս. Էջմիածին, 2019, էջ 451-486; Akopov A., Administrative and Demographic Picture of Tortum Region (from the 16th century up to 1878), "Historical Tayk", էջ 435-450:*

[3] *Տե՛ս Մելքոնյան Ա., Օսմանյան կայսրության ժողովրդագրական քաղաքականությունը..., էջ 43:*

[4] *Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Գ, էջ 110:*

[5] *Տե՛ս Ակոպով Ա., Տայք. վարչաժողովրդագրական պատկերը XVI դարից XIX դարի I երեսնամյակը, Երևան, 2013, էջ 97, 102:*

[6] *Տե՛ս Սահակյան Լ., Օսմանյան կայսրությունում համշենահայերի բռնի մահմեդականացման քաղաքականության հետևանքները, «Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», հ. IV, Երևան, 2006, էջ 212:*

[7] *Տե՛ս նույն տեղում, էջ 213:*

[8] *Տե՛ս նույն տեղում, էջ 215:*

Օսմանյան կայսրության՝ Սեֆյանների հետ սահմանին սուննի մուսուլմանների տիրապետող դիրքն ամրապնդելու տրամաբանությունից էր բխում[1]:

Արևմտյան Հայաստանի քաղաքներում օսմանյան կայազորների տեղակայման պայմաններում արհեստականորեն ավելանում էր բնակչության թիվը: Միաժամանակ տեղաբնիկ տարրի հաշվին 16-րդ դարում մարդաշատ քաղաքներ էին Էրզրումը, Վանը, Երզնկան, ինչպես նաև Կարսը, Բայազետը, Խլաթը, Բիթլիսը, Մուշը, Արճեշը, Սեբաստիան, Մալաթիան, Դիարբեքիրը, նույնիսկ՝ Մանազկերտը, որը քուրդ բեյերի միջև կռիվներից դեռ շատ չէր տուժել և 16-րդ դարի սկզբին ուներ մոտ 6 հազար տուն բնակչություն[2]:

16-17-րդ դարերի միգրացիոն գործընթացների հետևանքով ավելի էր ստվարացել պատմական Փոքր Հայքում օսմանյան վարչամիավորների հայ բնակչությունը: Հայահոծ էր Սեբաստիայի նահանգը, իսկ Կեսարիայի շրջանում հայ բնակչության աճի շնորհիվ 1550-1680-ական թթ. հիշվում են Կեսարիայի և Թոմարզայի հոգևոր առանձին առաջնորդներ[3]:

Օսմանյան վարչամիավորներից զատ անհրաժեշտ է դիտարկել նաև Սեֆյանների կողմից ստեղծված վարչատարածքային միավորները: Սեֆյան Պարսկաստանի կողմից Արևելյան Հայաստանում ստեղծված վարչամիավորներում բնակչության տեղաբաշխման պատկերը ստանալու հարցում մեր տրամադրության տակ պաշտոնական վիճակագրություն չկա: Գուցե այս հարցում մեզ որոշ չափով օգներ 1591 թ. Երևանի նահանգում Օսմանյան կայսրության կողմից կազմված հարկացուցակը, որը, սակայն, չի հրատարակվել և, բացի այդ, ամբողջական չի կազմվել: Նման պայմաններում պարսկական կալվածագրերի[4], հրովարտակների, հայ մատենագիրների, եվրոպացի և թուրք ուղեգիրների, ինչպես նաև վիմագրերի տվյալներով հնարավոր է հաստատապես պնդել, որ 16-րդ դարում Արևելյան Հայաստանը բավականին խիտ է բնակեցված եղել, ընդ որում՝ բնակչության գերակշիռ մեծամասնությունը շարունակել են կազմել հայերը: 1533 թ. օսմանյան բանակի՝ Արևելյան Հայաստան արշավանքը նկարագրելիս թուրք պատմիչ Իբրահիմ Փեչևին Շորագյալի (Շիրակի) համար առանձնահատուկ նշում է, որ մինչ իրենց զորքերի մուտքը «շատ բարեշեն է եղել, ունեցել է մշակված հողերով հարուստ բազմաթիվ գյուղեր», իսկ իրենց բանակն ավերել է դրանք[5]: Պարսից շահ Թահմասպ I-ի (1524-1576) 1565 թ. հրովարտակում առանձնահատուկ կարևորությամբ նշված են Ջուղան, Նախիջևանը, Գեղարքունիքը, Կաղզվանը և Շիրակը, ուստի նրանք միջազգային կամ տարածաշրջանային առևտրի կարևոր ուղիների վրա էին[6]: 20 հազար[7] բնակչությամբ Ջուղա գյուղաքաղաքն առհասարակ վերածվել էր մետաքսի միջազգային առևտրի համաշխարհային կենտրոններից մեկի, և «էր մեծ և երևելի շէնն այն ի ժամանակին յայնմիկ **ի մէջ արեւելեայ աշխարհիս** (ընդգծումը մերն է – Մ.Մ.), զի տակաւին ոչ էին վարեալ յաշխարհն Պարսից յայնմ ժամանակի»[8]: 1590-1605 թթ. օսմանյան տիրապետության շրջանից մեզ հասել են Թադեի, Դարաշամբի, Աստապատի և մերձակա վանքերի, Մակուի, Չորսի, Նախիջևանի և Գողթնի գյուղական որոշ համայնքների մասին օսմանյան վավերագրեր[9], որոնք հաստատում են Գողթն-Նախիջևանում և Պարսկա-

---

[1] *Տե՛ս նույն տեղում, էջ 216-218:*

[2] *Տե՛ս Հակոբյան Թ., նշվ. աշխ., էջ 20:*

[3] *Տե՛ս Ալպոյաճեան Ա., Պատմութիւն հայ Կեսարիոյ, Գահիրէ, 1937, էջ 907-909, 981:*

[4] *Տե՛ս «Մատենադարանի պարսկական վավերագրերը», II, կալվածագրեր, պր. Ա (ԺԴ-ԺԶ դդ.), կազմեց՝ Հ. Փափազյան, Երևան, 1968, վավ. 12-16, 18, 19, 21, 22, 24, 26, 27; Փափազյան Հ., Գյուղերն ու ագարակները Արևելյան Հայաստանում XVI-XVII դարերում, «ՊԲՀ», 1966, թիվ 4, էջ 222:*

[5] *Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Ա, կազմեց՝ Ա. Սաֆրաստյանը, Երևան, 1961, էջ 33:*

[6] *Տե՛ս Փափազյան Վ., Առևտրաարհեստագործական հարկը Սեֆյան տերության մեջ XVI դարում և նրա վերացման հանգամանքները, «ՊԲՀ», 1984, թիվ 2, էջ 117-120:*

[7] *Հասրաթյան Մ., Հայկական ճարտարապետությունը և պատմաաշխարհագրական ու դեմոգրաֆիկ գործոնները, «ՊԲՀ», 1996, թիվ 1-2, էջ 170:*

[8] *Առաքել Դավրիժեցի, Գիրք պատմութեանց, աշխ.՝ Լ. Խանլարյանի, Երևան, 1990, էջ 61:*

[9] *Տե՛ս Փափազյան Հ., Մատենադարանի թուրքերեն վավերագրերի աղբյուրագիտական արժեքը, «ՊԲՀ», 1974, թիվ 4, էջ 93:*

հայքում հայ բնակչության՝ գերակշռող լինելու մասին: Մինչ շահ Աբասի բռնագաղթը Սալմաստի եպիսկոպոսությունը բավականին բարձր դիրք ուներ[1]: Պարսից արքունիքին տրվելիք պարտքը փակելու համար աթոռակից Սահակ կաթողիկոսը մեկնել է հայաբնակ տարբեր վայրեր, այդ թվում՝ Խոյի գավառ[2]: Պարսկահայքի պատմաքաղաքական տարանջատումը Հայաստանի ընդհանրությունից, ըստ Հ. Առաքելյանի, տեղի է ունեցել 15-րդ կամ 16-րդ դարում, քանի որ մինչ այդ հիշատակվում է Երասխի կամուրջը, որի մասին չգիտեն Առաքել Դավրիժեցին, Տավերնիեն, Շարդենը, Թուրնեֆորը, ընդ որում՝ Շարդենը նույնիսկ պարզ նշում է, որ Երասխը Հայաստանը բաժանում է Մեդիայից[3], այսինքն՝ Ատրպատականից:

Արևելյան Հայաստանում հոծ հայ բնակչություն էր կենտրոնացած հատկապես Արարատյան դաշտում, որտեղից քանիցս 16-րդ դարում կազմակերպվել են հայերի բռնագաղթեր: Ամենաբուռն փուլը տեղի է ունեցել 1570-ական թթ. վերջին օսմանյան արշավանքի ժամանակ. «... և յաւուր միում գնացեալ ի վերայ Երևան քաղաքին և բերին գերի ոգիք ԻԴՌ (24 000) քահանայք և ռամիկք, կանայք և տղայք»[4]: Այս բռնագաղթի մասին տեղեկություններ տալիս են բազմաթիվ հեղինակներ, սակայն նրանց թվական տվյալները տարբեր են: Ժամանակագրություններից մեկում ասվում է, որ օսմանյան զորքերը 1579 թ. «զԵրևան գերեցին ՌԼ (30000)»[5], իսկ մեկ այլ ժամանակագրի համաձայն՝ գերեցին Երևան քաղաքի և հարևան 18 գյուղերի բնակիչներին, և «ցրուեցին զկին և զտղայ յամենայն աշխարհ»[6]: Ըստ 16-րդ դարի մատենագիր Հովհաննես (Հովհաննիսիկ) Ծարեցու՝ 1579 թ. Մուրադ III սուլթանը (1574-1595) Սեֆյանների դեմ ուղարկեց Լալա փաշային, ով եկավ «յերկիրն Արարատեան, և գերեաց ընդ Հայ և ընդ Տաճիկ՝ թուով ԿՌ (60 հազար – Մ.Մ.). և տարեալ խաղացոյց յերկիրն Հոռոմոց»[7]: Հատկանշական է, որ երբ 1579 թ. Փոքր Ասիայի բեյլերբեյի Ջաֆեր փաշան Կարսից շարժվում է «բարեշեն Երևանի երկիրը», Թոքմաք խանը թալանում ու հրկիզում է Երևանը և քաղաքից ու շրջակայքից գերի տանում 20 հազար մարդ (մեծ մասը՝ հայեր), որոնց ուղարկում է ստրկավաճառական շուկաներ[8]: 1579 թ. Սեֆյան մեկ այլ հրամանատար Ջիյադ օղլին «Գենջե քաղաքի և նրա գյուղերում ու գավառներում ապրող բոլոր ռայաներին՝ իրենց բոլոր մթերքներով, հագուստներով և կենդանիներով քշում տանում է: Շատերին բարձրացնում է լեռները, իսկ մնացածին՝ իր զինվորների հետ միասին, քշում տանում է Արազ գետի եզերքը: Նրա նպատակն էր պահել և պաշտպանել ռայաներին»[9]: Ի մի բերելով 1579 թ. բռնագաղթի վերաբերյալ սկզբնաղբյուրներում հիշատակվող թվերը՝ արձանագրենք, որ 24 հազար թիվը վերաբերում է Երևան քաղաքին, 30 հազարը՝ Երևանին և հարևան 18 գյուղերին, իսկ 60 հազարը՝ ամբողջ Արարատյան կուսակալությանը: Վերջին թվին պետք է գումարել նաև մինչ այդ Արարատյան կուսակալությունից Թոքմաք խանի կողմից գերեվարված 20 հազար մարդկանց ու Լալա փաշայի կողմից Նախիջևանից բռնագաղթվածներին, և տեղահանվածների ընդհանուր թիվը կգերազանցի 100 հազարը[10]:

---

[1] *Տե՛ս Առաքելեան Հ., Պարսկաստանի հայերը. նրանց անցեալը, ներկան եւ ապագան, մաս Ա, Վիեննա, 1911, էջ 26-27:*

[2] *Տե՛ս Առաքել Դավրիժեցի, էջ 206:*

[3] *Տե՛ս Առաքելեան Հ., նշվ. աշխ., էջ 35-36:*

[4] *«Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 251-252:*

[5] *Նույն տեղում, էջ 355:*

[6] *«Մանր ժամանակագրություններ (XIII-XVIII դդ.)», հ. 1, կազմեց՝ Վ. Հակոբյան, Երևան, 1951, էջ 172:*

[7] *«Պատմութիւն Աղուանից աշխարհին արարեալ Ծարեցի Յովհաննէս վարդապետին», տե՛ս Առաքել Դավրիժեցի, էջ 457: Հմմտ. «Մանր ժամանակագրություններ», հ. 2, էջ 241: Հովհաննիսիկ Ծարեցուն աղբյուրագետները երբեմն կոչում են Հովհաննես Ծարեցի (տե՛ս Առաքել Դավրիժեցի, էջ 533, ծանոթ. 433):*

[8] *Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», հ. Բ, կազմեց՝ Ա. Սաֆրաստյանը, Երևան, 1964, էջ 124:*

[9] *Նույն տեղում, էջ 134: Այս առիթով հետաքրքիր է, որ ներկայիս Այգեհատ գյուղից արևելք՝ Քոբայրի վանքից 1 կմ հյուսիս, Իգահատ գյուղատեղը լքվել է 1579 թ. հետո և այլևս չի հիշատակվում (տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պր. IX, կազմեցին՝ Ս. Բարխուդարյան, Կ. Ղաֆադարյան, Ս. Սաղումյան, Երևան, 2012, էջ 339):*

[10] *1520-1580-ական թթ. Օսմանյան կայսրության փոքրասիական հատվածի բնակչության թիվն ավելացել է 66,5 %-ով (տե՛ս Սահակյան Լ., Բարձր Հայքի..., էջ 49), ինչը կարող է բացատրվել ոչ թե Ֆ. Բրոդելի և Օ. Բար-*

Հայ բնակչությունը բավական խիտ էր մելիքական տների հովանու ներքո գտնվող Արցախում, Գեղարքունիքում, ինչպես նաև Սյունիքի մյուս հատվածներում, Գանձակում, վրացահպատակ Լոռիում: 1538 թ. Թահմասպ Ի-ի հրամանագրով հաստատվել է Գեղարքունիքի Ալթուն Թախթ, Փոքր Ենգիջա, Մեծ Ենգիջա, Փոքր Արաք, Միրաբաղ, Գյուրջի Վերան և Ամրսաղ գյուղերի մուլքերի պատկանելությունը Գեղարքունիքի Մելիք Բեկ Մելիք-Շահնազարյանին, 1605 թ. Մելիք Քյամալին է շնորհվել Նախիջևանի թումանի Զառուզիբիլ (Ծար և Սոդք) գավառի Ղարասաղալ գյուղից հարկերի գանձման իրավունքը, նույն թվին Աբաս Ի-ի հրամանագրով շահական բոլոր պաշտոնյաներին հրամայվել է Գեղարքունիքից բերված գերիներին ներմամբ հանձնել Յավրի Բեկին, իսկ 1708 թ. Երևանի դատարանի արձանագրության մեջ նշվում է Մելիք-Շահնազարյաններին վերադարձվող գյուղերի ցանկը՝ Ղարանլուղդարա, Դրախտիկ (Թուխլիջա), Մազրա, Ադիյաման (Կոթ), Ալթուն Թախթ, Փոքր Ենգիջա, Մեծ Ենգիջա, Փոքր Արաք, Միրաբաղ, Գյուրջի Վերան, Ամրսաղ[1]: 16-րդ դարում Գեղարքունիքի մելիքության՝ Տաթևի վանքին հարկատու գյուղերի ցանկում թվարկված են Ղուլալի (Գավառից 2 կմ հարավ-արևելք), Վերին Քյոլաղրան, Դալուղարդաշ (Սարուխան), Քթաշեն, Գավառ, Կոթ, Կածիք, Կնձուտ, Գանձակ, Նորատուս և այլ գյուղեր[2]:

16-րդ դարի վերջին Երևանի և Գանձակի նահանգներում, ըստ Խուան Պարսկաստանցու (16-17-րդ դարեր), 250 հազարական ծուխ բնակչություն կար, իսկ ըստ Սիդոնի եպիսկոպոսի մի գրության՝ 1587 թ. «Մեծ Հայքի» կաթողիկոսի իրավասության տակ կար ավելի քան 260 հազար հայ ընտանիք, Սսի՝ ավելի քան 20 հազար[3]: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վանա լճի ավազանում գործում էր Աղթամարի կաթողիկոսության նվիրապետական աթոռը, Գանձակ-Արցախում՝ Գանձասարի կաթողիկոսությունը, իսկ մեր նախորդ ուսումնասիրություններում հայ բնակչության ընտանիքի միջին մեծության գործակիցը 16-րդ դարում 7,6 էինք հաշվարկել[4], ստացվում է, որ 1587 թ. դրությամբ Հայաստանի տարածքում միայն Ս. Էջմիածնի նվիրապետության ներքո կար առնվազն 2 մլն հայ բնակչություն: Այս թվին զուգահեռ հաշվարկելով Խուան Պարսկաստանցու թվերը և դիտարկելով Լ. Սահակյանի և Ա. Մելքոնյանի կողմից մուսուլմանների համար ընդունելի համարվող ընտանիքի միջին մեծության 6 գործակիցը՝ միջինացված գործակցով հաշվարկով ստանում ենք, որ Գանձակի և Երևանի նահանգներից յուրաքանչյուրում օսմանյան բռնազավթման սկզբնափուլում կար շուրջ 1,75 միլիոն բնակչություն: Հաշվի առնելով նաև Արևմտյան Հայաստանի վարչամիավորներում բնակչության տեղաբաշխումը (1250 գյուղ Չըլդըրի նահանգում, 520 գյուղ Էրզրումի նահանգի միայն 3 գավառակներում, 100-ից ավելի գյուղեր Վանի նահանգի միայն մոտ մեկ տասնյակ նահիեներում)՝ կարող ենք եզրակացնել, որ 16-րդ դարում Հայաստանը շարունակել է բավականին խիտ բնակեցված լինել, ընդ որում, չնայած պատերազմական գործողություններին, օտար տարրերի ներթափանցումներին, հայ բնակչության զանգվածային բռնագաղթերին, արտագաղթին, սովին և հիվանդություններին, հայկական բնակավայրերի ավանդական ցանցը դեռևս շարունակել է պահպանվել:

քանի «միջերկրածովյան ավազանի ժողովրդագրական պայթյուն»-ի տեսությամբ, այլ բռնագաղթերի քաղաքականությամբ, որի կարևոր թիրախը Հայաստանն էր: Ի դեպ, 1560-ական թթ. կեսերին Օսմանյան կայսրության բնակչության թիվը շուրջ 15 մլն էր (տե՛ս Barbero Al., Il divano di Istanbul, Palermo, 2011, էջ 100-101; Mansel Ph., Constantinopoli: Splendore e declino della capitale dell'Impero Ottomano 1453-1924, Milano, 1997, էջ 82-83; Tüzün G., Muhteşem Süleyman, "Tarihte Olağanüstü Kişiler", Ana Yayıncılık, 2004, էջ 19):

[1] Բնակավայրերի անվանումները տրված են մահմեդական փաստաթղթերում ներկայացված ոչ հայկական ձևերով (տե՛ս Կոստիկյան Ք., Գեղարքունիքի Մելիք-Շահնազարյանների պատմությունից, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. 24, Երևան, 2005, էջ 303-329):

[2] Տե՛ս Բարխուդարյան Ս., Գեղարքունիքի մելիքներն ու տանուտերերը ըստ Տաթևի վանքի մի փաստաթղթի, «Բանբեր Մատենադարանի», թիվ 8, Երևան, 1967, էջ 191-227:

[3] Տե՛ս Կարապետյան Մ., Երևանի բնակչության էթնիկական կազմի և թվաքանակի փոփոխությունները 1600-1724 թթ., «ՊԲՀ», 1986, թիվ 2, էջ 97:

[4] Տե՛ս օրինակ՝ Մալխասյան Մ., Ժողովրդագրական գործընթացների միտումները և առանձնահատկությունները Հայաստանում ԺԶ դարում, «Էջմիածին», 2016, թիվ Դ, էջ 55:

Եզրակացություն

Համադրելով վերը կատարված հաշվարկները, բնակչության տեղաբաշխման պատկերը, Հայկական լեռնաշխարհի բնակլիմայական պայմանները և հետևապես հացահատիկի ու առհասարակ սննդի ստացման լայն հնարավորությունները՝ միանգամայն իրատեսական ենք համարում, որ Հայաստանի բնակչության թիվը լիներ 5 միլիոնի սահմաններում, որից առնվազն 4 միլիոնը՝ հայեր: Հակառակ պարագայում 17-րդ դարի սկզբին Հայաստանին պատած ամենազանգվածային բռնագաղթից, ինչպես և աննախադեպ սովից ու ժանտախտից հետո մի քանի տասնամյակում բնակչության տեղաբաշխման նախկին պատկերը և բնակավայրերի ցանցը չէին կարող իրենց հիմնական գծերով վերականգնվել:

Микаэл Малхасян, ОБЩАЯ КАРТИНА РАСПРЕДЕЛЕНИЕ НАСЕЛЕНИЯ В АРМЕНИИ В XVI ВЕКЕ НА ПРИМЕРЕ ОТДЕЛЬНЫХ АДМИНИСТРАТИВНЫХ ЕДИНИЦ. В XVI веке Армения стала ареной боевых действий между Османской империей и Сефевидским Ираном. Многолетний конфликт очень негативно повлиял на нормальное развитие Армении, затронув различные направления социально-экономического и культурно-духовного развития. В числе этих негативных явлений, демографические последствия были особенно заметны, поскольку армянское население, как целая демографическая система, стало подвергаться внешним воздействиям, нарушившим его нормальную жизнь. Такие воздействия включали депортацию населения, насильственный сбор детей, систему сбора налогов с учетом религиозных различий, поощрение обращения в другую веру и так далее. В таких обстоятельствах цель нашего исследования - понять картину распределения армянского населения в административных единицах, созданных двумя иностранными державами, в процессе тех негативных воздействий, которые произошли в результате политики этих стран. Для достижения этой цели мы поставили задачу извлечь как можно больше исходной базы данных, которая достаточно узка для указанного периода и имеет методологические особенности, такие как классификация населения в османских налоговых списках не по этнической, а по религиозной принадлежности.

Ключевые слова: Османская империя, Сефевидский Иран, Армения, распределение населения, XVI век, армяне, отдельные административные единицы.

Mikayel Malkhasyan, GENERAL PICTURE OF POPULATION DISTRIBUTION IN ARMENIA IN THE 16TH CENTURY ON THE EXAMPLE OF SEVERAL ADMINISTRATIVE UNITS. In the 16th century, Armenia became the scene of hostilities between the Ottoman Empire and Safavid Iran. The decades-long conflict had a very negative impact on the normal development of Armenia, affecting different directions of socio-economic and cultural spheres. The demographic consequences were especially prominent, as the Armenian population, as a whole demographic system, began to be exposed to external influences that disrupted its normal life. Such influences included the deportation of the population, the forcible collection of children, the system of tax collection based on religious distinctions, the promotion of conversion to Islam, and so on. In such circumstances, the aim of our research is to understand the picture of the distribution of the Armenian population in the administrative units, created by the two foreign powers, through the processes of those negative impacts. In order to achieve this goal, we set a task to extract as much as possible the source database, which is rather narrow for the mentioned period. It also has methodological issues, such as the classification of the population in the Ottoman geographical records not by ethnicity but by religious affiliation.

Keywords: Ottoman Empire, Safavid Iran, Armenia, population distribution, the 16th century, Armenians, separate administrative units.

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

2021, № 1

Գլխավոր խմբագիր՝ Էդիկ Մինասյան

Խմբագիր՝ Միքայել Մալխասյան

Տեխնիկական խմբագիր՝ Տիգրան Ղանալանյան
Սրբագրումը՝ Արմեն Մալխասյանի
Համակարգչային ձևավորումը՝ Միքայել Մալխասյանի

Հասցեն՝ 0025, Երևան, Աբովյան 52
Адрес-0025, Ереван, ул. Абовяна 52
Address: 0025, Yerevan, Abovyan 52
E-mail: histcultjournal@gmail.com
tel: 060-71-06-00, 055-92-88-00

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1
«Մեկնարկ» ՍՊԸ տպարան, Երևան, Աբովյան 41

Издательство ЕГУ, Ереван, ул. Ал. Манукян 1
Типография ООО “Мекнарк”, Ереван, ул. Абовяна 41

Տպաքանակը՝ 200